



Ամեան Թոթովեց

Մարտահրավեր

Չարչարանքի խորություն մը կ'երկարեք
Իր ճակատին մարմարներեն դեպի ներս՝
Երբոր մայրը իր պապերուն հավատքով
Իր Զավակին մութ սընարին մոտեցավ.
Կ'ը նիրհեր ան մրրկահույզ երազով,
Որուն կուրծքին կանաչազարդ դաշտին վրա
Խավարամած երկինք մը կար տարածված:
Թշվառությունն էր անոթի գյուղ երուն,
Որ հոն՝ մոր մը հառաջանքով կաթողին,
Ցեղիս զորեղ բազուկներուն կ'երկարեր:
Լացավ Մայրը, երգեց Մայրը լալազին,
Որում տղան իր անուրջեն այսահար
Բացավ աչքերը բարմագեղ, ուրկե դուրս
Արցունքն ու լույսը միատեղ խուժեցին:
Լացավ Մայրը, երգեց Մայրը լալազին,
«Կանզնե՛ Տղա՛, ցեղիդ մոայլն ըզգեցե՛ր,
Զի Սափորին մեջ լույսի
Մահվան մութը կը ծորի.
Եվ ակոսներն, լի բարությամբ կաթնալի,
Արյուններով և արցունքով կոռոզվին,
Եվ կը սևնան ատելության խորշակեն
Ցորյանները ոսկեփրփուր աշունին:
Ահա՛ հեստ սուրդ ճակատիդ շափ պերճախոս

Բազուկներուդ Արյունին հետ կը ժպտի.
Տե՛ս, անտառը հույսի կրակն է առեր,
Տե՛ս, կուրծքին մեջ՝ ուրկե հասակդ առավ թև՝
Գիշերները կը շարժին,

Եվ ոսկորները պապերուդ արծվագեղ
Մարտի ճամփուդ վրա քեզի կըսպասեն:
Դոան առջև կը դափրե ձին ոսկեհուո
Եվ աչքերեն կը թափին կայծ ու սարսուո,
Հորիզոնին մարմարները կը կարմրին,
Ինչպես հրդեհն աստվածացած անտառին:
Արշալույսը որմին վրա է արդեն
Ելի՛ր Տղա՛ս, քրոջդ ոսկի գանգուրներուն ի խնդիր:
Մերկ՝ ինչպես կույսն արձակված սրսկապանի թևերեն,
Որուն կուրծքեն կը հոսին իբր այզի կաթ շիթ առ շիթ
Ո՛ւժ, սե՛ր, ա՛ստղ, լա՛լ, պերճա՛նք, ճաճա՛նչ, մարգարի՛տ:
Յատկե՛, Տղաս, ցեղիդ մոայլն ըզգեցե՛ր,
Քեզ պիտ ցուցնեմ այն անդունդին եզերքն, ուր՝
Մահը առած մեր կյանքերուն արևծագերը բոլոր
Պիտի ոստնու դեպ գահավեժն ահարկու,
Ուրկե ինք՝ մահն միայն կրնա դուրս ելնել:
Գահավեժին սեմին կանգնած՝ պետք է մահը սպաննես
Ցցելով դեմն անմահությունը լուսեղ:
Պետք է հսկես կայծակնալից բիբերով,
Մինչ րնկերներդ զինակիր
Ծանր դագաղ մը ուսերին պիտ վազեն՝
Մահու դիակին ի խնդիր:

1912 թ.